ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

«Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի արտահերթ նիստի

2026թ-ի հուլիսի 4-ին կայացել է մանկավարժական խորհրդի արտահերթ նիստ:
Նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի 65 անդամները:

Օրակարգում՝

1. Մանկավարժական խորհրդի 2026 թվականի հունիսի 30-ի նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):
2. 200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորող՝ Էլինա Սահակյանի վերաքննությանը չներկայանալու հարցի քննարկում (դասղեկ՝ Լ. Խաչատրյան):
3. Օգոստոս ամսին վերաքննությունների կազմակերպման հանձնաժողովի կազմի, ժամանակացույցի և թեստերի կազմման հարցի քննարկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):

Լսեցին՝

1. **Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատման մասին հաղորդումը (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Տնօրենի ժ/Պ Ա. Գարեգինյանը ներկայացրեց մանկավարժական խորհրդի 2026 թվականի հուլիսի 4-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 3 հարցից:

Լսեցին՝

2. **200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորող՝ Էլինա Սահակյանի վերաքննությանը չներկայանալու հարցի քննարկում (դասղեկ՝ Լ. Խաչատրյան):**

Լսեցին

Էլինա Սահակյանի դասարանի դասվար՝ Լ. Խաչատրյանը զեկուցելով վերաքննություններին սովորողի բացակայության վերաբերյալ՝ նշեց, որ մինչև վերաքննության օրերը բազմիցս կապ է հաստատել սովորողի ծնողի հետ և տեղեկացրել քննություններին ներկայանալու անհրաժեշտության մասին: Նշվեց, որ ծնողը հրաժարվել է սովորողին քննության օրերին դպրոց բերել և ապահովել նրա մասնակցությունը, ինչի հետևանքով սովորողը քննություններին չի ներկայացել և չի մասնակցել:

Լսեցին՝

3. **Օգոստոս ամսին վերաքննությունների կազմակերպման հանձնաժողովի կազմի, ժամանակացույցի և թեստերի կազմման հարցի քննարկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անի Գարեգինյանը նշեց, որ սահմանված կարգի համաձայն վերաքննությունների երկրորդ փուլն իրականացվում է օգոստոսի 20-ից 25-ն ընկած ժամանակահատվածում: Նշվեց, որ նպատակահարմար է վերաքննությունների կազմակերպման

համար սահմանել երկու օր՝ օգոստոսի 24-ը և 25ը՝ ապահովելով սովորողների համար տարբեր օրերին տարբեր առարկաների քննություններ հանձնելու հնարավորություն: Առաջարկեց քննարկել վերաքննությունների հանձնաժողովի կազմը հաստատել նույն կազմով, ինչ լրացուցիչ քննությունների կազմակերպման համար էր հաստատված:

Արտահայտվեցին

Տարրական դասարանների մասնախմբի ղեկավարը առաջարկեց, հաշվի առնելով, որ սովորողի բացակայության պատճառով նախապես մշակված քննական թեստերը չեն կիրառվել, օգոստոս ամսին կազմակերպվելիք վերաքննության ընթացքում կիրառել նույն թեստային նյութերը:

Լսելով 2026 թվականի հուլիսի 4-ի մանկավարժական խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել մանկավարժական խորհրդի 06.07.2026 թվականի նիստի օրակարգը:
2. Սահմանված կարգով 4-րդ Գ դասարանի սովորող Էլինա Սահակյանի համար օգոստոսին կազմակերպել վերաքննություններ՝ երկրորդ փուլով:
3. Ստեղծել վերաքննություն ընդունող հանձնաժողով հետևյալ կազմով՝
    - նախագահ՝ տնօրենի ժ/պ Անի Գարեգինյան,
    - անդամներ՝ Խուբլարյան Ամալյա, Խաչատրյան Լուսինե, Մխեյան Տաթևիկ, Նավասարդյան Սյուզի:
4. Վերաքննությունները կազմակերպել հետևյալ ժամանակացույցով.
    - օգոստոսի 24-ին՝ Տեխնոլոգիա, Ֆիզկուլտուրա, Երաժշտություն, Մայրենի,
    - օգոստոսի 25-ին՝ Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, Կերպարվեստ, «Այլընտրանքային հաղորդակցում»:
5. Համաձայնել տարրական դասարանների մասնախմբի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել քննությունների համար նախապես մշակված, սակայն այդ չօգտագործված թեստային նյութերի կիրառումը նաև վերաքննությունների ընթացքում:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ա. Գարեգինյան**

Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ **Ա. Անդրեասյան**

04.07.2026